

Եթե Միացյալ Նահանգներ Ազրպեյձանի ընտրության նախագահը ճանշանալի հիմամբ Այիբեր է ոչ՝ Իսա Ղամաթը, ապա այդ պարագային «Կեցցե Պրն Լատենը»: Անցյալ շաբաթվա ընդհանուր խորհուրդում լուրջ քննարկումներ կատարվեցին, որ եթե Ուաշինգթոնը մերժեց պարզապես ընդհանուր խորհուրդի կողմնակից լինելը, ապա ընդհանուր խորհուրդը կը պահպանի Պրն Լատենին: Այլ լրատվամիջոցները «Թուրան» հաղորդում է լրատվություն մը՝ «Այլիս Արպար կամ կուտայի ժողովրդավարություն է և մերթիվհայ խորհուրդը»: «Ազրպեյձանի հիասթափ հասարակության համար հետզհետե՛ս ալեկի կը յստականայ «քաղաքական Ուսահապիլ մին» մտնանայու հեռանկարը», նշում է լրատվության մէջ:

«ԱՐՄԵՆՓՐԵՍ»

ԻՍՐԱՅԷԼ ԱՇԽԱՐՀԻ ԱՀԱՐԵԿՉԱԿԱՆ ԱՄԷՆԷՆ ՎՏԱՆԳԱԴՈՐ ԿԵԴՐՈՆՆ Է

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ՍՈՒՐԻՈՅ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՇՏԱՐՔԱ

ԳՄՄՍՍԿՈՍ, 20 (ԱՅՓ).- Սուրիոյ փոխ նախագահ Չուհէյր Մաշարքա դատապարտեց իսրայէլեան բանակին յարձակումները պաղեստինեան շրջաններուն վրայ: Ան դատապարտեց նաեւ Միացյալ Նահանգները, որոնք ամբողջական պարտադրութիւն կը յայտնեն հրէական պետութեան:

Մաշարքա ըսաւ որ պատերազմներու ոճրագործ վարչապետը՝ Արիէլ Շարոն բնաջնջման պատերազմ մը յայտարարած է գրաւեալ հողերը իրենց բնակչութենէն զրկելու համար: Ան աւելցուց, որ Ռաֆահի մէջ քանի մը օր առաջ կատարուած ջարդերը յստակ ցուցանիշներ են, թէ ահաբեկիչ Շարոնը խաղաղութեան թշնամի է եւ թէ անոր կառավարութիւնը պատերազմի կառավարութիւն է: Մաշարքա դիտել տուաւ, որ Միացյալ Նահանգներ քաղաքական, պիտուրական, տնտեսական եւ նիւթական օժանդակութիւն կու տան Իսրայէլի եւ կը փորձեն արդարացնել իսրայէլեան ոճիրները՝ զանոնք ինքնապաշտպանութեան միջոցառումներ անուանելով:

«Իսրայէլի աշխարհի ահաբեկչական ամէնէն վտանգաւոր կեդրոնն է: Անկա ահաբեկչական պետութիւն մըն է, որ հաճոյք կ'առնէ արաբներուն դէմ գործած իր արարքներէն», աւելցուց Մաշարքա:

ՄՏԷՅՐ ՊԱՏՐԻԱՐՔ ԶՈՒԻՑԵՐԻՎՅՅԷՆ ԿԸ ԿԱՏԱՐԷ ՀԱԿԱՍՈՒՐԻԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարոնիներու Նաւարայա Պոթրոս Սֆէյր պատրիարքը Երոզպա կատարած հովուապետական իր այցելութեան ծիրէն ներս երէկ հասաւ Չուիցերիա, ուր տուաւ մամուլի ասուլիս մը, որուն մէջ անդրադարձաւ ներլիբանանեան կեանքը յուլոյ հարցերու:

Սֆէյր պատրիարքը յայտնեց, որ Լիբանանի ներքին բեւը յուլոյ հիմնական հարցերէն է պետութեան կողմէ բանեցուող ճնշումը երիտասարդութեան վրայ, որ հիմնական պատճառն է երիտասարդութեան գաղթին:

Ան աւելցուց, որ սուրիական ուժերու ներկայութիւնը Լիբանանի մէջ նաեւ մեծ հարց է, որովհետեւ ոչ միայն ներկայութիւն են Լիբանանի մէջ, այլեւ ներքին հարցերու կը միջամտեն ամենայն համարակարգութեամբ եւ ամէն մակարդակի վրայ:

Սֆէյր պատրիարքը ընդգծեց, որ թէեւ Լիբանան ոչ մէկ ձեռով կ'ուզէ բախումներ ունենալ Սուրիոյ հետ, բայց կը պահանջէ իր հողերուն վրայ սուրիական ուժերու վերադասարարումը, ինչպէս նաեւ Լիբանանի անկախութիւնը, գերիշխանութիւնը եւ ազգային ինքնորոշման իրաւունքը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՆԱԽԱՐԱՐ ՀԸՐՏԱՆԻ



Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը երէկ այցելեց աշխատանքի նախարար Սասա Նորունի: Տեսակցութեան ընթացքին խորհրդակցութիւններ կեդրոնացան շրջանային եւ տեղական քաղաքական նորագոյն իրադարձութիւններուն վրայ: Խօսակցութիւնները վարձագան երկրին մէջ տիրող տնտեսական իրավիճակին եւ անոր ծիրին մէջ աշխատատեղերու ընդհանուր իրաւունքներուն վերաբերող հարցերուն մասին:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴԱՅԻՆ ԵՒ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ՝ ԿԱԶԱՅԻ ԿՐԱՅ, ՇԱՄԱՍԻ ԴԷՍ. ԱՌՆՈՒԱԶՆ 7 ՉՈՐ ԵՒ ԱԲԵԼԻ ՔԱՆ 40 ՎԻՐԱԿՈՐ

Առնուապն 7 պաղեստինցիներ սպաննուեցան եւ աւելի քան 40 ուրիշներ վիրաւորուեցան երէկ Կապայի դէմ օդային եւ ցամաքային հինգ մեծ յարձակումներու ընթացքին, որոնց թիրախը Համաս շարժումն էր, յայտնեցին ակաւնտեսներ եւ հիւանդանոցային աղբիւրներ: Իսրայէլ կը հակադարձէր Կիրակի գիշեր Այսրլորդանանի մէջ իսրայէլացի պիւտրներու դէմ գործուած յարձակումին, որ երեք զոհ խլած էր:



Իսրայէլացի պիւտրները սպաննուած էին Ռամալլայի մօտ, Այն Եապրուտ գիւղին ճամբուն վրայ, ուր պաղեստինցի պիւտրներ կրակ բացին անոնց դէմ: Չորրորդ պիւտրը մըն ալ յարձակումներով ունիւրեցին Կապայի Նահատակներու Փաղանգները, որոնք ստանանցից գործողութեան պատասխար անտուրիւնը:

Իսրայէլ չունշացաւ հակադարձելու եւ իսրայէլեան ուժերը երեք յարձակումներով ունիւրեցին Կապայի Նահատակներու Փաղանգները, որոնք ստանանցից գործողութեան պատասխար անտուրիւնը:

Իսրայէլ չունշացաւ հակադարձելու եւ իսրայէլեան ուժերը երեք յարձակումներով ունիւրեցին Կապայի Նահատակներու Փաղանգները, որոնք ստանանցից գործողութեան պատասխար անտուրիւնը:

Պաղեստինցի գլխաւոր բանագնաց Սաէպ Ուրայքաթ իր կարգին դատապարտեց Կապայի դէմ երեք յարձակումները, որոնք թափ պիտուան վայրագութեան ու արիւնահեղութեան:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅՈՒՆԻՍԿՈ

Վարչապետ Ահմէտ Քորէյ երէկ յայտնեց, որ իր կառավարութիւնը կ'ուզէ կապուակել ընտրութիւնները եւ վանոնք կայացնել Յունիս 2004ին: Քորէյ, որ կը խօսէր մամուլի ասուլիսի մը պահուն, շեշտեց, որ կառավարութեան գլխաւոր մտահոգութիւններէն մէկն է ընտրութիւններու հարցը: Ան աւելցուց, որ պիտի կայանան նախագահական, երեսփոխանական եւ քաղաքապետական ընտրութիւններ:

Միւս կողմէ, Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն վերստին խաղաղութեան խորհրդատու նկատեց Եասէր Արաֆատը: Ան դիտել տուաւ նաեւ, որ խաղաղութեան ճամբը քարտէսը կը մնայ միակ յոյսը խաղաղութիւն հաստատելու համար պաղեստինցիներուն հետ: Շարոն ըսաւ, որ պէտք չէ շեղի այդ քարտէսէն:

ՄԵՆՔ ԹՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԵՏ ԿԸ ԲԱՆԱԿՑԻՆՔ ԵՒ ՈՉ՝ ԲԱՆԱԿԻՆ

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԹԷՆՔ

ԱԹԷՆՔ, 20 (ԱՅՓ).- Յունաստան երկուշաբթի օր թրքական բանակին ընդհանուր հրամանատարը քննադատած է՝ երկկողմանի յարաբերութեան միջամտութեան պատճառով, անոր այն յայտարարութենէն ետք, թէ երկու երկիրներուն միջեւ հարցերը կրնան արագօրէն լուծուիլ Անգարայի Ե. Միութեան անդամակցութենէն ետք:

Յունաստան «Թուրքիոյ կառավարութեան հետ կը բանակցի եւ ոչ բանակային ղեկավարներու հետ», ըսած է արտաքին գործոց նախարարութեան բանքեր Փանոս Պելլիթիսի՝ զօրավար Հիմիի Էօպրոքի արտայայտութիւններէն ետք:

Դիւանագիտական բանավեճը ծայր տուած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլիի երեքշաբթի օրուան (այսօր) Աթէնք Շարք՝ Էջ 10

ՈՒՍԱՍԱ ՊՐՆ ԼԱՏԷՆԻ ՎԻՏԷՕ ԵՐԻՁԸ ԻՐԱԿԱՆ Է

ԿԸ ՀՍՍՏԵ ՍԻ. ԱՅ. ԷՅ.

ՈՒՍԵՆԿԵԼ, 20 (ԱՅՓ).- Սի. Այ. Էյ.ի մասնագէտներու եկրակցութեամբ, Շաբաթ օր «Տապիր» կայանին կողմէ սփռուած ձայների վրայ հակապէս Ուսամա Պրն Լատենի ձայնը եղած է: Ան կը սպառնար անձնասպանական գործողութիւններու ձեռնարկել Մ. Նահանգներու եւ անոնց դաշնակիցներուն դէմ՝ Իրաքի գրաւումին վրէժը լուծելու համար:

Սի. Այ. Էյ.ի մէկ պաշտօնատարը ըսած է, որ ձայների վրայ մէջ պաղեստինցի նախկին վարչապետ Մահմուտ Ապպասի ակնարկութիւն մը ցոյց կու տայ, թէ անիկա անցնող 6 ամիսներու պատրաստում է:

Ձայների վրայ նորագոյն փաստն էր, թէ Պրն Լատեն տակաւին ողջ է եւ գործօն՝ հակառակ երկու տարիէ ի վեր տեղի ունեցող հալածանքներուն եւ Աֆղանիստանի մէջ անոր յապատան տուած թալկապան վարչակարգին տապալումին:

ՅՐԱՆՍԱՅԻ, ԳԵՐՄԱՆԻՈՅ ԵՒ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԱՅՍՈՐ ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՊԻՏԻ ՏԱՆ ԻՐԱՆ

Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարները այսօր աննախընթաց այցելութիւն մը պիտի տան Իրան, մինչ կան կարգ մը ցուցանիշներ, թէ իսլամական վարչակարգը կը պատրաստուի մեծ պիշու մը կատարելու Կորիկային Ուժանիթի Միջազգային Գործակալութեան հետ ծայր տուած տազնապի մը գծով:

Գործակալութեան մօտ Իրանի ներկայացուցիչ Այի Արպար Սալեհի ըսած է նաեւ, որ ՄԱԿի մարմինն հետ բանակցութիւնները «հասկացողութեան մը» յանգած են՝ ալեկի խիստ քննութիւններու առնչութեամբ: Ան ըսած է, որ ներկայիս Իրան «ալեկի դրական կեցուածք ունի» կորիկային պիտի տարածուի արգիլող համաձայնագիրին (Էն. Փի. Թի.) կապուած յաւելեալ փորձագործի մը կնքումին առնչութեամբ:

Սալեհիի համաձայն, այժմ Իրանի կառավարութիւնը պէտք է որոշէ, թէ պիտի կնքէ՞ փորձագործը:

Մինչ այդ, նախագահ Մոհամէտ Սաթեմի կը պատրաստուի այսօր ընդունելու վերոնշեալ երեք երկիրներու արտաքին գործոց նախարարները՝ ձեք Սթրօ, Տոմինիք տը Վիլիս եւ Եոշքա Ֆիշըր, անոնց հետ քննարկելու համար կորիկային ծրագիրին հարցը:

Երեք երկիրները երէկ հաստատած են այցելութիւնները:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ «ԵՐԵՒԱԿԱՅԱԿԱՆ» ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԸ

«ԱՆՄԱՀ ԲԱԳԻՆՆԵՐՆ ՀԱՅՈՑ»

(ՊԱՏՄԱԿԵՊ)

Հեղինակ՝ ԶՈՆԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ

Երեւանի մէջ այս տարի (2003) լույս տեսաւ 392 էջերով պատմավեպ մը, որուն հեղինակն է Զոնիկ Մելիքեան:

Ըսինք՝ պատմավեպ, որովհետեւ ան կը բովանդակէ Հայոց պատմութեան Զորքորդ դարը ներկայացնող (առաւելաբար) դէպքերու եւ դէմքերու, տարբեր իրադարձութիւններու եւ վերիվարուածներու արձագանգները: Քաղաքական եւ ընկերային գոյավիճակը վերծանած է հեղինակը, շեշտը դնելով եկեղեցի եւ արքունիք, կաթողիկոս եւ արքայ փոխ յարաբերութեանց վրայ, որ երկուսն էլ լարուած, ոչ սիրալիք, բախումներով, դաւաճութիւններով, հակառակութիւններով եւ թշնամանքով լեցուն դարաշրջան մը:

Գրիգոր Լուսաւորիչի տարածած քրիստոնէութեան հաւատքին շարժումը հաճոյ չի թուիր Տրդատ արքայի յաջորդ Խոսրով Կոտակին, որուն որդին՝ Տիրան արգէն կը բանադրուի կաթողիկոսին կողմէ, իբրեւ անառակ եւ անվայել կենսասիրութեան հետեւող:

Հոս հարկ է նկատի առնել նաեւ այդ ժամանակաշրջանի Մեծ Հայքի քաղաքական-դիւանագիտական պատկերը, որ բաժնուած է երկու գէշ տեղութեանց միջեւ: Բիւզանդիոնն ու Պարսկաստանը տէրերն են Հայաստանին, որ ձեռով մը ինքնիշխան, բայց խորքին մէջ ենթակայ ու հարկատու է վերոյիշեալ գոյգ տէրութեանց:

Հայաստանի տարբեր շրջաններու վրայ իշխող իշխանական տունները, Արշակունեաց հարստութեան պահպանները, ուսմիկ, ազատ թէ իշխանագուն ընտանիքներու փոխարարներութիւնները, հեթանոսական հատկութիւններով իրողութիւնը, քրիստոնէութեան յառաջընթաց ծաւալումը ստեղծած են ազգայնական թէ հոգեւորական իշխանութեանց տիրապետման բախումներ: Կողմեր կան՝ պարսկասէր եւ բիւզանդասէր: Բազմիցս կողմեր կը կոչուին: Երկուսն էլ հարկաւորութեան թանկ դարձնող, մարդպետը, խառնաշփոթ կացութիւն մը, որուն մէջ կը տուալային ուսմիկ ժողովուրդն ու շինականները: Ո՞ր կողմին հետ ըլլալ:

Պատմավեպ մեզի կը ներկայացնէ միջնորդ մը, ուր քաղաքական հակամարտութեանց ընդմէջէն կը ծաւալին սիրային տրամադրութիւններ, արքայազունը դատուն եւ հեթանոսական շրջանի ժառանգորդներուն միջեւ: Կաթողիկոս Վրթանէսը դժուարութիւններու կը մատնուի: Ան գործի կը լծէ հակողութեան «աչքեր», հոգեւորական դասէն լրտեսներ, արքայական պայտտին մէջ տեղի ունեցած գեղի ու ծոյլ կեանքին մասին տեղեկութիւններ քաղելու համար: Ու վերջապէս, հայ ժողովուրդի նկարագրային հակասութիւններու դէմ հանած վիճակ մը, որուն վարպետ մեկնաբանը եղած է հայրենի պատմագէտ, գրագէտ, արձակագիր Զոնիկ Մելիքեան:

Իբրեւ ընթացող, հարկ է խոստովանիլ հեղինակին երկար շնչառութեան, հայոց պատմութեան խորքերը թափանցելու սուր նշյուղածքին, օրուան դէպքերն ու կացութիւնը կը շարունակուի քաղաքական մտածողութեան, որոնց վրայ կ'աւելնան լեզուական հարազատ հաւատարմութիւնը, իբրեւ դարուն հոգեբանական արտայայտիչը: Լեզու ըսելով կը հասկնանք լեզուագիտական իր ճանաչողութիւնը, դարաշրջանի լեզուամտածողութեան առնչուած: Հոս չենք ուզեր մատնանշել արքեանական ուղղագրութիւնը, որ արեւմտահայ ընթեր-



ցողին աչքերուն խորթ կը թուի եւ կը դժուարացնէ վէպին ոչ այնքան «դիւրամարս» թեման: Տարանդ ունի հեղինակը մանրամասնելու իրադարձութիւնները. ան խօսքեր կը դնէ վիպակարին մէջ շարժող ու շնչող տիպարներուն բերնին մէջ: Հողին կառչած շինականը ներկայ է հոն, պայծառական ժառանգութեան եւ աւանդութեան պատգամ հայր՝ նոյնպէս: Թագաւորական ընտանիքին կեանքը սերտող ժողովուրդը առկայ է. ան կ'ուզէ, որ Արտաւազը պաշտպանէ հայ ազգը իբրեւ անպարտելի տիրութիւն: Ու այնքան բազմաթիւ են տիպարները իրենց պատմաշունչ անուններով, որոնց թուումը զարմանք կը պատճառէ: Հեղինակը կարծէք «գոց սորված է Մովսէս Խորենացիէն, Եղիշէէն, Փաւստոս Բիւզանդէն եւ միւս պատմիչներէն ժառանգուած գրականութիւնը: Այնքան ջերմ ու հաւատարմութեամբ սերտած է իւրաքանչիւր էջը, որ վաւերական կը դարձնէ վէպը: Ընթերցողին այնպէս կը թուի, թէ Զոնիկ ժամանակակից եղած է չորրորդ դարու ապրողներուն, ծանօթացած է պայտտականներուն, իշխաններուն թէ կաթողիկոսական շրջանակի դասուն, մտերմութիւն ունեցած է անոնց հետ:

Անպառ երեւակայութեան տէր է վիպագիրը. ան մտքով ու սեփական հոգեբանութեամբ թուիք առած է դէպի հեռուները դարբերուն, ուր անպակաս եղած են մարդկային վատ ու լաւ, յոռի ու թերի խառնուածքներ, նաեւ՝ քաղցրեան, հայրենասիրութեան, վեհանքանութեան անապարտելի հետեւող հայեր, ամէն դասակարգի պատկանող: Հեղինակին հոգեմտաւոր թուիքը չէ թուցած վէպին մէջ ծայրէն միւսը, ինչ որ օգնած է դէպքերու յաջորդական ընթացքին, կառուցը վերեւելով ճարտար յորինուածքի: Այս ըսելով հարկ է մատնանշել աւանդական վէպի կառուցչին հեռու մնալու գրագէտին տրամադրութիւնը. հոս կը տեսնենք նոր ոճի որդեգրում, որ ինքնայղացում մըն է, նոր ձեւի ստեղծագործութիւն:

Ընթերցողը թերեւս կանգ առնէ պահ մը եւ խորհրդաձէ, հաշիւ տալով իր կողմէ եղած-յորինուած երկին երկարաշունչ «գնացք»ին հետեւելով: Արդեօք յաւելեալ մանրամասնութիւններու մէջ չէ՞ մտած Զ. Մելիքեան: Արդեօք կարելի չէ՞ որ տեղ-տեղ կը ճատել պատկերներ, տեսարաններ, ժողովրդական փոխ յարաբերութեան ու կենսակցական մանր-մունք իրադարձութիւնները գեղչելու համար: Իրաւացի նկատողութիւն մըն է ասիկա, բայց երբ թափանցեք դարուն յարափոփոխ վերիվարումներուն, երբ նկատի առնենք «բղիտուած» Հայաստանի մը՝ Պարսկաստանի եւ Բիւզանդիոնի-հոռոմներու տիրակալական սպառնալիքներուն, իրաւունք կու տանք հեղինակին, որ մեր աչքերուն առջեւ բացած է ժամանակաշրջանի պատմութիւնը հայոց, գահ-աթոռի տիրանալու տենդերը, ոսկիի տենչով ալրող նախարարական տուններու անյազ տրամադրութիւնը, պիտի շարունակենք ընթերցումը մինչեւ իր աւարտը:

Վէպը կը բացայայտէ պետական իշխանութեան հակադրութիւնը եկեղեցի կառուցչին դէմ, եկեղեցի, որ սկսած է պաշտել ՆՈՐ ԱՍՏՈՒՈՒՄՈՑ մը, «որ օտար է»... Կայ փոստանք Հին ԱՍՏՈՒՄՆԵՐՈՒ կործանման, անոնց հանդէպ հրապարակային անարգանք ընդունելի կեցուածք մը չէ պարսկասիր գանգուածին կողմէ: Նախարարներ կան, որոնք Շապուհէն թագ կ'ակընկալեն, կողմ են, հետեւեալ արակայ է քէնը, ոճիբը, սպանդը:

Հայոց պատմութեան անտեղեկ ընթերցողը մեծ հետաքրքրութեամբ պիտի հետեւի դէպքերու գահավէժ միջնորդին, նոյնանալով ժամանակի հոգեբանութեան, պարծենալով ու փոստալով նոյն ստեղծ:

Հայոց Պատմութեան ծանօթ լինելով շատ ընթերցողը պիտի գարմանայ Զոնիկ Մելիքեանի հոգեմտաւոր պատրաստութեան, ազգային տրամադրութեան նկատմամբ անոր նախնախնդրութեան, ուր կը յայտնաբերուի նոյն ատեն բարի կամեցողութիւն՝ պահպանելու ազգային մեր բոլոր գանձերը, աւանդութիւնները, արքայական թէ տոհմիկ, ժողովրդական թէ պաշտամունքային:

ՀԱՆՏԱՆԻՍ

(Շար. 1)

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅ ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

Ամիսներ առաջ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արթուր Պաղտասարեան յայտարարած էր խորհրդարանական բարեկամութեան հայկական վեհաժողովի հիմնելու նախաձեռնութեան մասին՝ նպատակ հետապնդելով համախմբել արտերկրի ծագումով հայ խորհրդարանականները:

Հայաստանի խորհրդարանի մէջ կազմուած աշխատանքային խումբ մը ճշդած է օտար խորհրդարաններու մէջ հայազգի պատգամաւորներու թիւը, որոնք, նախնական տուեալներով, մօտ 80 հոգի են, եւ անոնց արդէն դրկուած են հրաւերներ հայ հաւաքին մասնակցելու համար:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԵ ՀԱՄԱԼՐԵ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ

Հայաստանի պետական 14 թատրոններու շարքը համալրեց նաեւ Երեւանի Համազգային թատրոնը: Թատրոնի կառավարութեան վերջերս կայացուցած մէջ ղորոշումով, Համազգային թատրոնը ստացաւ պետական կարգավիճակ եւ կը նախատեսուի, որ 2004 թուականի պետական պիտոճէէն ստանայ 11 միլիոն 500 հազար դրամ:

Թատրոնի գլխաւոր բեմադրիչ Հրաչեայ Գասարեանի կարծիքով, այսպիսի ֆինանսաւորում մը առիթ կու տայ կազմելու 10 - 15 արուեստագէտներէ բաղկացած թատերախումբ մը, ինչպէս նաեւ պայմանագրային հիմունքներով հրաւիրելու արուեստագէտները, նոր շուկաներուն յայտնաբերումը, հայրենական արտադրողներու եւ արտասահմանեան առեւտրական ընկերութիւններուն միջոցով:

Համազգային թատրոնին մէջ վերջին տարւոտանքներուն բեմադրուած է երկու տասնեակէ աւելի ներկայացում: Հ. Գասարեան ըսաւ, որ այսօր խաղացանկային քաղաքացիականութիւնը յստակ է. «Որեւէ թատրոն պէտք է

ներկայացնէ իր ազգայինը, անոր համար ալ անհետաքրքրական է աշխարհին»: Անոր կարծիքով, միջին սերունդի եւ յատկապէս երիտասարդներու շրջանակին մէջ ներկայիս տաղանդաւոր երիտասարդներ շատ կան: Այս գործին մէջ մեծ է նաեւ Երեւանի թատրոնի եւ շարժապատկերի պետական հիմնարկին դերը, որ արդէն երրորդ տարին ըլլալով կը կազմակերպէ թատերագէտներու եւ բեմադիրներու դասընթացը:

ԿԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԱՐՇԱՒ ՍԻՆԵՔԻ ՄԷՋ

Վերջերս Սինեքի մէջ իրադրոճուեցաւ «Բարի կամք, բարի գործ, բարի ելք» կամաւորական արշաւը, գոր նախաձեռնած էր ԻՖԵՍ - Հայաստան կազմակերպութիւնը: Արշաւը, որուն նպատակն էր խրախուսել կամաւորական շարժումը եւ հասարակական կազմակերպութիւններու գործունէութիւնը՝ իբրեւ տեղական խնդիրները լուծելու, համայնքները միաւորելու եւ զարգացնելու արդիւնաւէտ միջոց, արդէն երկրորդ տարին ըլլալով կը կազմակերպուէր Սինեքի մէջ:

Կամաւորական այս երկօրեայ գործունէութեան շրջանակներուն մէջ տեղի ունեցան մարզասիրական միջոցառումներ, որոնցմէ 2003-ին աւելին՝ կապան քաղաքին մէջ: Արշաւին առաջին օրը բարութեան նուիրուած միջոցառումներ կազմակերպուած են նախակրթարաններու եւ միջնակարգ դպրոցներու մէջ: Կապանի թիւ 7 միջնակարգ դպրոցի աշակերտները բարեկարգած են երկրաշարժի զոհերուն յիշատակը յաւերժացնող յուշաքարը, մանկապարտէզի մը մէջ իրագործուած է ծառատնկում, երկրաշարժի թանգարանին մէջ յայտնաբերուած է բաց դռներու օրեալը:

Կազմակերպուած են նաեւ մշակութի գործիչներու մեծաթանքի երեկոներ, բաց դռներու օրապատկերներու եւ արտասահմանեան առեւտրական ընկերութիւններուն միջոցով: Այս տարի «Բարի կամք, բարի գործ, բարի ելք» արշաւին աւելի մեծ թիւով մասնակցողներ կային, քան անցեալ տարի:

Ըստ Ա. Դաւթեանի, ցուցահանդէսին ներկայացուցիչը գլխաւոր ար-

տադրութիւնները պիտի ըլլան՝ գինիները, շամփանիաները, քոնիակները, օղիները, պտուղի եւ բանջարեղէնի պահածոնները, բնական նիւթեր, գաւառներ, հանքային ջուրները եւ ոչ ոգեղից ըմպելիները, հրուշակեղէնը, միսը, կաթնեղէնները, պաղպաղակը, ծխախոտը եւ այլն:

ԱՅԿԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ԶՈՒՑԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԵՏԻ ԾԵՆԵ, Բ. ՅԱՐԿ ԾՆՈ. (01) 242558/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ՀԱՆՏԱՆԻՍ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԿԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Ելոյթ կ'ունենան՝

Հայրենի միջազգային դաշնակահար ԱՐԱՄ ԿՐԹԱՍԿԱՆԵԱՆ

Հայրենի տաղանդաւոր ջութակահար ՄԱՐՏԻՆ ԵԱՐԵԱՆ

Հովանաւորութեամբ՝

Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան ԱՐԵԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 25 Հոկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էստիպլի հոլ»-ին մէջ

Տոմսերը ստանալ՝

Down Town BHV Jnah

Համազգայինի գրախանութիւն (Շաղոյեան կեդրոն, Պուրճ Համուտ), Տիպոքթե Գեքա (Պուրճ Համուտ), Սքիտիո Վաչէ (Հաճըն), Obelix գրախանութ (Ամթիլիա) եւ Ելոյթի օրը կիշէն կամ հեռաձայնել 01 - 249375 եւ 01 - 265899 քիւրուց:

Միջապալին Քաղաքական Կեանք

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆԻ ՄԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՓՈԹՈՐԻԿ ԿԸ ՍՏԵՂԾԵՆ

Ուսումնառող Լատինյան և Սատտամ Հիւսէյնը հետապնդող ամերիկեան գաղտնի գործարարները մը յայտարարեցին պատասխանատուի մը իսլամներուն եւ իրենց կրօնին դէմ կատարած ընդդիմացող արտայայտութիւնները տակաւին քաղաքական եւ լրատուական մակարդակներու վրայ իրենց շուրջ կը կեդրոնացնեն Միացեալ Նահանգներու իսլամական համայնքին բուռն հակազդեցութիւնը:

Այս հակազդեցութիւնը եւ քննադատութիւններու մթնոլորտը աւելի եւս սաստկացաւ, երբ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտը եւ ամերիկեան քաղաքացիական իրաւունքներու պաշտպան Մայքլ Քոնրոյը «Ներդրում» կեցուցումներով մը մերժեցին պատարակել ամերիկացի բարձրաստիճան գիտնորակները, կամ նոյնիսկ խոստովանել, որ այս վերջինիս կեցուցումները մերժելի եւ դատարարութիւն են, հակառակ այն բոլոր քննադատութիւններուն, զորս այս հարցին շուրջ հնչեցուցին Միացեալ Նահանգներու Քոնկրէսի կարգ մը անդամներ եւ ամերիկեան իսլամական կազմակերպութիւններ:

Իր գիտնորակ համազգեստով եկեղեցիներուն մէջ եւ կրօնական արարողութիւններու ընթացքին խօսք առնող գործ. Ուրիմը Պուիթընը «քարոզներուն վերջնական» ցուցումներն յատկապէս ի յայտ կու գայ. թէ վերջինս կը կարծէ, թէ քրիստոնէական կրօնը աւելի մեծ է իսլամներուն կրօնէն, եւ թէ վերջիններս «կուռքեր» կը պաշտեն:

Այս բարձրաստիճան գիտնորակները, որ յայտնի է իր գիտնորակ հատկութեամբ եւ այն իրողութեամբ, որ պատերազմի ընթացքին երկու անգամ վիրաւորուած է, նկատելի կու տայ, որ ահաբեկչութեան դէմ պատերազմը սլաքար մըն է երկու հիմնական ուժերու միջեւ աւաղինը կը ներկայացուի հրէական - քրիստոնէական սկզբունքներով, իսկ երկրորդը «սատանան» է կամ «Տոգելոթի» թշուառի մը, որուն անուր խաւարի իշխանութիւն է: Ան կ'ըսէ, թէ իսլամ արմատականները Միացեալ Նահանգները թիրախ կը դարձնեն, որովհետեւ վերջիններս կը կարծեն «քրիստոնէական պետութիւն» մը:

Չոր. Պուիթընի գառնացիները չեն սահմանափակուի բարեբեւեւ չարութիւններու բախումին մասին խօսելով, այլ նաեւ կ'ընդգրկեն հոգեւոր հարցերուն գծով իր ունեցած պատկերացումները, ամերիկեան քաղաքականութիւնը եւ նախագահ Պուիթընի ընտրութիւնը այս ծանր պայմաններուն մէջ: Այսպէս, օրինակ՝ իր ճառերէն մէկուն ընթացքին Պուիթընը արտայայտութեան պատճառներուն մասին հարց տուած է. «Ինչու՞ այս մարդը Սպիտակ տան մէջ: Ամերիկացիներուն մեծամասնութիւնը չընտրեցին զինքը... եւ ես ձեզի կ'ըսեմ, թէ ան Սպիտակ տան մէջ կը գտնուի, որովհետեւ Աստուած զինքը հոն դրաւ այս պայմաններուն մէջ:

Պուիթընը նկատելի կու տայ, որ Միացեալ Նահանգներ քրիստոնէական պետութիւն մըն է, որովհետեւ անոր հիմքերը եւ արմատները հրէական - քրիստոնէական աւանդութիւններուն մէջն են: Ան Օրեկոն նահանգին մէջ գտնուող եկեղեցիի մը մէջ այս առնչութեամբ արտասանուած «քարոզ»ի մը մէջ անցեալ Յուլիսին յայտարարած է. «Ասիական կը նշանակէ, թէ մենք յանձնառու ենք իսրայէլի նկատմամբ, եւ այս յանձնառութեանն որեւէ ձեւով չենք կրնար հրաժարիլ: Ան ամերիկեան հանրապետութեան կազմաւորման գործընթացին մէջ հրէական աւանդութիւններուն կարեւորութեան մասին խօսելէ ետք աւելցուցած է. «Մեր կրօնը ծնունդ առած է հրէականութենէն, ասոր համար այլ այդ ծայրայեղականները (իսլամները) յաւիտեանս պիտի առեն մեզի»:

Այսպիսի ընդդիմացող յայտարարութիւններ կը նկատուին կտրուկ շեղում ամերիկեան գիտնորակական աւանդութիւններէն, որովհետեւ ամերիկացի գիտնորակները կը խուսափին քաղաքական կամ կրօնական յայտարարութիւններ կատարելէ:

Անցեալ Չորեքշաբթի առաջին անգամ ըլլալով ամերիկեան «էն. Պի. Սի.» պատկերասփուռի կայանը «Լոս Անճելըս Թայմզ» օրաթերթին գիտնորակական վերլուծարանին համագործակցութեամբ բացայայտեց ամերիկեան քաղաքացիական իրաւունքները հարմարեցնող գործընթացը. Պուիթընի տեսութիւնները: Չոր. Ուրիմը Պուիթընը մասնակցած է այն բոլոր գիտնորակական գործողութիւններուն, զորս իրականացուցած են ամերիկեան գիտնորակական ուժերը իրանի մէջ ամերիկացի պատանդներու փրկութեան փորձէն սկսելով մինչեւ կրեմատայի ներխուժումը, Փանամա եւ Սոււմալ: Ամիսներ առաջ, Պուիթընը նշանակուեցաւ պաշտպանութեան նախարարութեան բանբեր եւ անոր յանձնուեցաւ Պուի Լատին եւ Սատտամ Հիւսէյնը հետապնդելու կողմէ գաղտնի սպասարկութիւններու եւ յատուկ ուժերու գործունէութիւնը համակարգելու պարտականութիւնը:

«էն. Պի. Սի.» ցուցադրեց գործ. Պուիթընը կարգ մը լրատուականներ, որոնց մէջ վերջինս եկեղեցիի մը մէջ կը խօսի մարդիկը գործարարի ենթարկելու առաքելութեան մասին, որպէսզի վերջիններս «Աստուծոյ արքայութեան գիտնորները դառնան»:

Այս յայտարարութիւնները, որոնցմէ քանի մը հատը վերջերս լոյս տեսան «Լոս Անճելըս Թայմզ» թերթին մէջ, քննադատութիւններու փոթորիկ մը ստեղծեցին: Այս քննադատութիւնները արտայայտուեցան կրօններու երկխօսութեամբ զբաղող կազմակերպութիւններու եւ Քոնկրէսի անդամներու կողմէ:

Միւս կողմէ, գործ. Պուիթընը «էն. Պի. Սի.» պատկերասփուռի կայանին լրատու, որ յառաջիկային պիտի պակսեցնէ իր արտասանելիք ճառերը իր նոր պաշտօնին պատճառով: Ան ըսաւ, թէ չուզեր թիրախացուած տեղի տալ եւ նկատուի «աջակողմեան ծայրայեղական մը»:

ԻՍՐԱՅԷԼ Կ'ԱՄԲԱՍՏԱՆՈՒԻ ԱՅՐՅՈՐԴԱՆԱՆԸ ՍՈՎԻ ՄԱՏՆԵԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ

Արիէլ Շարոնի կառավարութիւնը գայրոյթով կը հակադարձէ ՄԱԿի հրապարակած մէկ տեղեկագրին, որուն համաձայն, իսրայէլ կ'ամբաստանուի կազան եւ Այսրը, յորդանանը սովի մատնելու յանցանքով:

Չուիցեցիցի ընկերաբան եւ ՄԱԿի յատուկ պատուիրակ ժան Յիկլըրի տեղեկագիրը իսրայէլը յանցաւոր կը գտնէ պաղեստինցիները «հաւաքազօրաւոր հարուած մը հասցուցած է ՄԱԿի հետ մեր յարաբերութիւններուն, որ արդէն չափազանց լարուած է: Ան ըսաւ, թէ անընդունելի է Յիկլըրի պահած լուրիսին 10 օր անցուցած էր բռնադատութեան հողերուն վրայ եւ 18 նոյնմըրթին Նիւ Եորքի մէջ տեղի ունեցած ՄԱԿի Ընդհանուր Ժողովին պիտի ներկայանայ տեղեկագիրը, որ սակայն անակնկալօրէն անցած է ոմանց ձեռքը:

Իսրայէլացի պաշտօնատարներ տեղեկագիրը նկատած են քաղաքական պատճառներէ դուրս՝ ըսելով, թէ Յիկլըր իր լիազօրութիւններէն դուրս եկած է: ՄԱԿի մէջ ամերիկացի դիւանագէտներու օգնութեամբ իսրայէլ կողմէ գտնուեցաւ մը մասին, որ ուղղած է տեղեկագիրը մերժելու, նախքան որ ան Ընդհանուր Ժողովի օրարարի վրայ դրուի, եւ պահանջած է ՄԱԿի Մարդկային Իրաւանց

Յանձնախումբէն, որ դատարարակէ Յիկլըրը:

Յրանսական մամուլին համաձայն, Յիկլըրի տեղեկագիրը պիտի հրատարակուի գարնան:

Թուրքիա իսրայէլի, ՄԱԿի մէջ իսրայէլի ներկայացուցիչ մը, ըսաւ. «Յիկլըրի վերաբերմունքը զօրաւոր հարուած մը հասցուցած է ՄԱԿի հետ մեր յարաբերութիւններուն, որ արդէն չափազանց լարուած է: Ան ըսաւ, թէ անընդունելի է Յիկլըրի պահած լուրիսին 10 օր անցուցած էր բռնադատութեան հողերուն վրայ եւ 18 նոյնմըրթին Նիւ Եորքի մէջ տեղի ունեցած ՄԱԿի Ընդհանուր Ժողովին պիտի ներկայանայ տեղեկագիրը, որ սակայն անակնկալօրէն անցած է ոմանց ձեռքը:

Ժրնեի մէջ ՄԱԿի պաշտօնատարներ, իրենց կարգին դժգոհութիւն յայտարարեցին: Ըսելով, թէ ՄԱԿ իսրայէլի հետ իր գործակցութիւնը բարելաւելու համար պարտաւորուած է «ոսկեայ առիթ մը կորսնցնուած է», եւ թէ Յիկլըր հետեւած է անձնական ցատուի հոսանքին:

Յիկլըր, սակայն, պատրաստ կը թուի ըլլալ ՄԱԿի հետ ճակատելու: «Այս մէկը պայթուցիկ տեղեկագիր մըն է լուր ողբերգութեան մը մասին, որ տեղի կ'ունենայ պաղեստինեան շրջաններու ակրա-ստիստ ողբերգութեան տարի», ըսաւ ան:

25 էջ հաշուող տեղեկագիրին մէջ, որմէ օրինակ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առնչութեամբ ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումն բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ Գաղտնիք պարագային թուով) փոխադրել: Ազգակի ծանուցումներու գրասենյակը:

«ՄԱՐԶԻԿ»Ի ԸՆԹԵՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Մարզիկ»ի վարչութիւնը կու գայ տեղեկացնելու, թէ Պուրճ Համուտի եւ չրպազի իրարմէ շրջաններուն մէջ «Մարզիկ»ի օրը ցրուիչն է ԳՐԻԳՈՐ ՏԻՐԱՆԻ ԶԱՄԵՆԵԱՆ: Նախկին ցրուիչը՝ Յակոբ Գարակոբեան աշխատանք կը դադարէր, երկու տարիներու ծառայութենէն ետք:

ԶԱԻԱՆՔԻ ՕՐԵՐ 3-8 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2003

ԲԱԺՆԱՐԴԱԳՐՈՒԹԵՅԻՔ «ԱԶԳԱԿ»ԻՆ

Վարչութիւնը «Ազգակ»ի ցարկական բաժնակազմի մը ընթերցողները օրաթերթին հետ կը նպաստանան:

ԵՐԿԻՐ

Հարաւարեք, ամսական յանդիմաններ «Պարիկ-Մարիկ»ը, «Անահիպ»ը, «Նախապր»ն ու «Ազգակ-ամսաթերթ»ը:

ԲԱԺՆԱՐԴԱԳՐՈՒԹԵՅԻՔ ՎՃԱՐԵԼ ԼՍՄԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՄԸ

«ԱԶԳԱԿ» օրաթերթ, Շաղոյիան կեդրոն Հեռ. 01-260115, 01-241274, 01-258526 Fax: 01-258529 E-mail: aztag@inco.com.lb website: www.aztagdaily.com

www.aztagdaily.com

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ «ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Համաձայնագիրը Հոկտեմբերի սկիզբը պատրաստուեցաւ Յորդանանի մէջ: Երբագրներ կան յառաջիկայ ամիս գայն ժրնեի մէջ ստորագրելու:

Իսրայէլի թերթերուն կողմէ «ժրնեի համաձայնագիր» անուանուած այդ նախաձեռնութիւնը ի գործ դրուելու յոյս չունի մօտիկ ապագային:

Ներկայիս կողմերը տագնապի մէջ են, չեն ուզեր զիջումներ կատարել, սակայն վերոնշեալ փաստաթուղթը այլընտրանք մը կը ներկայացնէ, որ զիջումի ջատագովներ կրնայ գրաւել: Անիկա նաեւ այլ ընտրանք մը կը ներկայացնէ ինչ կը վերաբերի ներկայի բանակցութեանց ռազմավարութեան, որ հիմնուած է այսպէս կոչուած «ճամբու քարտէս»ին վրայ, որ իր կարգին կը նպատակադրէ ապահով պայմաններ ստեղծել համաձայնութեան մը գոյացման համար:

Ժրնեի համաձայնագիրը հակառակը կ'առաջարկէ. գոյացնել համաձայնութիւն մը, որ կը տանի դէպի խաղաղութիւն: Համաձայնագիրին մէջ տեղ գտած են կարեւոր հարցեր, ներառեալ՝ պաղեստինցի գաղթականներուն վերադառնալու իրաւունքը, Երուսաղէմի հակակիրը եւ Այսրըղարանի իսրայէլացիներով բնակուած վայրերուն հարցը:

Համաձայնագիրին հիմնական կէտերը հետեւեալներն են.

Ա.- Պաղեստինցիները պիտի ճանչնան իսրայէլը, որ պիտի քաշուի 1967ին ճշդուած սահմաններէն անդին, քանի մը հողատարածութիւն փոխանակման համաձայնութեամբ:

Բ.- Պաղեստինցիները պիտի հրաժարին տասնեակ հազարաւոր գաղթականներու վերադարձի իրաւունքէն, որոնք նախկին պատերազմներուն ընթացքին հեռացած կամ արտաքսուած էին: Ոմանք կրնան վերադառնալ, սակայն միայն՝ իսրայէլի հաւանութեամբ, ուրիշներ հատուցում պիտի ստանան:

Գ.- Երուսաղէմը պիտի բաժնուի վարչական առումով, բայց ոչ՝ ֆիզիքապէս: Իսրայէլացիներուն կողմէ լեռան տաճարը եւ իսլամներուն կողմէ Հարամ Շարիֆ կոչուած ամենէն զգալուն վայրը պիտի ըլլայ պաղեստինցիներուն տիրապետութեան տակ: Միջազգային ուժեր պիտի երաշխաւորեն այցելուներուն մուտքը: Իսրայէլացիներուն պիտի տրուի Արեւմտեան Պատը կամ Լազի Պատը, ինչպէս իրենք կը կոչեն:

Դ.- Պաղեստինեան պետութիւնը պիտի ապառազմականացուի:

Գլխաւոր զիջումները կը թուին ըլլալ վերադարձի իրաւունքին եւ Երուսաղէմի բաժանման հարցերուն մէջ: Վերադարձի իրաւունքի երկարատեան պահպանուած յոյսերուն չբացումով պաղեստինցիները կը հրաժարին պաղեստինեան միացեալ պետութեան մը վերստեղծման յոյսերէն: Լեռան տաճարի պաշտօնական հրաժարումով, իսրայէլացիները կ'ընդունին Երուսաղէմի բաժանումը. բան մը, որ միշտ մերժած էին անցեալին:

ԲԱՆԱԿՅՈՂՆԵՐԸ

Փաստաթուղթը յառաջ տանող անձնակազմի կողմէն ըրած ծանօթ են համաձայնութիւն մը գոյացնելու իրենց նախկին փորձերով, յատկապէս՝ Օսլոյի համաձայնութեան պարագային:

Իսրայէլի կողմէն աշխատակողմեան նախկին նախարար Եոսի Պէլլիցի զլխաւոր դերակատարն է, սակայն կան նաեւ ուրիշներ, ներառեալ՝ Աշխատակողմեան կուսակցութեան նախկին նախագահ Ամրամ Միցնան եւ գրագէտ Ամուս Օզը: Եոսի Պէլլիցի նշեց, թէ քննադատներ կրնան ըսել, թէ՛ «ասիական վատ համաձայնութիւն մըն է, թէ՛ մենք տեղի կու տանք եւ կը հրաժարինք մեր իրաւունքներէն, սակայն մէկ բան պիտի չկրնան ըսել, թէ չկայ գործակից:

Պաղեստինեան կողմին ղեկավար դէմքը Եասէր Ապտալապտին, պաղեստինցի նախկին նախարար մը, որ այս համաձայնութիւնը «նոր ժամանակակից ժամանակի մը սկիզբ» անուանեց: Կը նշուի, թէ պաղեստինցի ղեկավար Եասէր Արաֆատ կ'ապի մէջ կը պահուի, սակայն անոր նեցուկին չափը տակաւին յայտնի չէ:

«ԱՆԿԱՐԵԼ»

Սակայն «նոր ժամանակակից ժամանակ» հեռու է տակաւին: Իսրայէլցի նախարարները կը մերժեն համաձայնութիւնը:

Արտաքին գործոց նախարար Սիլվան Շալոմ նշեց, թէ՛ «Իսրայէլի մէջ կառավարութիւն կայ եւ անկէ գատ որեւէ բան անիրական է»: Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն իր կարգին նշեց, թէ՛ «կայ ճամբու քարտէս մը եւ ժողովուրդին ուրիշ կարելիութեան մը մասին մտածել տալը չ'օգնէր կացութեան:

Երուսաղէմի նախկին քաղաքապետ Էհուտ Օլմերթ արտայայտեց իսրայէլի կառավարութեան մէջ տիրող տեսակետը, երբ նշեց, թէ պաղեստինցիներուն հետ համաձայնութիւն գոյացնելու «անկարելի» է եւ թէ՛ «մենք աւելի մօտ ենք միակողմանի գործընթացի մը յաղողութեան մը, որ անընդելի իրականութիւնները պիտի ստեղծէ»: Ասիկա կը նշանակէ, որ իսրայէլ առանձին պիտի որոշէ իր սահմանները:

Այդ տեսակետին եւ այդ ոչ պաշտօնական համաձայնութեան միջեւ գոյութիւն ունեցող ճեղքը լայն է եւ հաւանաբար՝ անկամըջի:


ԱՆՋՐՊԵՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

ՔՈԼԻԻՄՊԻԱՅԻ ԱՂԷՏԻՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԱՍԱՅԻ ՄՇԱԿՈՅԹԸ ՅԱՆՅԱԻՈՐ ԿԸ ՆԿԱՏԷ



ՆԱՍԱ կարելի ամեն ինչ չէ ըրած Քոլիմպիայի անձնակազմին ապահով երթուղարձը երաշխավորելու համար:

Ամերիկեան Քոլիմպ-պի անձնակազմին ապահով երթուղարձը երաշխավորելու համար:



Դեպի անջրպետ երթուղարձ կատարող ապագայ անջրպետանավերն մեկը թերեւս, Սի. Այ. Էյ. Պի.ի համաձայն, կենսական է ներկայիս զոյու-թիւն ունեցող 3 անջրպետանավերը փոխարինել ճորճերով:

Հրապարակեց 248 էջ ունեցող տեղեկագիրք մը, ուր անի-կա մանրամասնորէն նկարագրած է տեղի ունեցածը՝ իսկական, ֆիզիքա-կան գետնի վրայ, ինչպէս նաեւ՝ կազմակերպական իմաստով եւ թելադրանք-ներ կատարած է մնացեալ երեք անջրպետանակները արձակելէ առաջ կատար-ւելիք աշխատանքին մասին:

Քաղաքականութիւն, պիւտեճներ, ժամանակա-

տին մէջ մտնել եւ էջը կա-տարել, մինչ անոր ձախ թռիչքն ընդհատուած էր 16 օր առաջ, անոր թռիչք առնե-լէն 81,7 երկվայրկեան ետք՝ կտոր մը ֆոմի հար-ւածին պատճառով:

Անոր անձնակազմի 7 ան-դամները զոհ գացին ար-կածին:

Պարզ բառերով, ֆոմը պատճառած է արկածը», ըսած է մարմինին անդամ ՆԱՍԱ-ի միակ պաշտօնա-տարը՝ Սթըիվ Հայրտ, 27 Օգոստոսին, շեշտելով, որ արկածին պատճառը ստորջ է:

Սակայն տեղեկագիրքը արկածին թեքնիք պատ-ճառէն շատ աւելի անդին կ'երթայ եւ մշակութային, քաղաքական եւ պիւտե-ճական տուեալներու ամբողջական գնահատում մը կը կատարէ:

«Ազգային ղեկավարնե-րու՝ Սպիտակ Տան, քոնկ-րէի եւ ՆԱՍԱ-ի կեդրո-նատեղեքու անցեալի որո-շումները Քոլիմպիայի արկածը ընթացքի մէջ ղրած են՝ ստեղծելով նիւ-թական եւ ժամանակացոյ-ցի կապուած ճնշումներ, որոնք վտանգած են ար-հեստագիտական մեծ ուսք ընդգրկող կազմա-կերպութեան մը սկզբունքները», կ'ըսէ տե-ղեկագիրքը:

Անիկա կը յայտնէ, որ ՆԱՍԱ-ի յաջողութիւնը չափուած է անոր ծախսե-րը նուազեցնելու եւ ժա-մանակացոյցը յաւազոյն ձեւով յարգելու կարողա-կանութեամբ: «Սակայն կարելի չէ անջրպետը հե-տախուզել անշարժ ծախ-սերու հիման վրայ», կը շեշտէ տեղեկագիրքը:

ՆԱՍԱՅԻ ՄՇԱԿՈՅԹԸ

Տեղեկագիրքը ծանրորէն կ'ապահովէ ՆԱՍԱ-ի կազ-մակերպական մշակոյթը եւ արկածին մէջ անոր դե-րակատարութիւնը:

Անիկա կ'ըսէ, որ ար-կածին կազմակերպական պատճառներուն արմատը դէպի անջրպետ ուղար-կուող անջրպետանակուն ծրագիրին «պատմու-թիւնը եւ մշակոյթն է, նե-րառեալ՝ առաջին օրերու զիջումները, որոնք անհը-րաժեշտ եղած են անջրպե-տանակուն զծով հաւա-նութիւն ապահովելու հա-մար, իսկ աւելի ուշ՝ նիւ-թական կարելիութեանց սահմանափակումները, տարուբերող առաջնա-հերթութիւնները, ժամա-նակացոյցի զծով ճնշում-ները եւ մարդկային անջր-պետագնացութեան առնչ-

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՃԱՆԵՐ

Անիկա նաեւ կը նկա-



Քոլիմպիայի ձախ թելը մահացու կերպով վնասուած է անոր թռիչք առնելու ընթացքին, երբ ֆոմի կտոր մը հարուածած է զայն: Անոր պատ-ճառած ձեռքը առիթ տուած է գերտաքցած կա-զի, որ թելն մերս մտնէ, այդ բաժինը հալեցնէ եւ անջրպետանակուն տարանջատումին յանգի:

Հուլիսին զազգային տես-լականի մը պակասը: Քննիչներու խմբակը, գլխաւորութեամբ հանգստեան կոշուած ծո-վուծի ծովակալ Հարրիս կ'համարէ, բազմաթիւ նմա-նութիւններ եւ զուգա-հուններ գտած է Քոլիմ-պիայի եւ 1986ի Չելընճըրի աղէտներուն միջեւ, հա-կառակ 17 տարուան տար-բերութեան:

Անոնք գտած են նաեւ, որ Չելընճըրի աղէտէն ետք ՆԱՍԱ-ի քաղած դա-սերը տարիներու ընթաց-քին մոռցուած կամ ան-տեսուած են:


Քննիչները յատուկ գո-վասանքով արտայայ-տուած են դէպի անջրպետ երթուղարձ կատարող անջրպետանակներու ծրա-գիրին վրայ աշխատող մասնագէտներուն մասին: Անոնք գտած են, որ ՆԱՍԱ-ի պատասխանա-տուները առնուազն 8 առիթներ փախցուցած են Քոլիմպիայի 16 օրուան թռիչքին ընթացքին գնա-հատումը՝ կատարելու հա-մար անջրպետանակը տա-քէն պաշտպանող «վա-

ուածին նման հարուած-ներ արձանագրուած են առանց յատուկ անդա-րագրի:

Հարցը անտեսուած է անջրպետագնացութեան գործակալութեան մէջ հետզհետէ աւելի զարգա-ցող մշակոյթի մը պատճա-ռով, ուր՝ «կամաց-կամաց ՆԱՍԱ աւելի ու աւելի ուսերը ընդունելի կը նկատէր ճշգրտած ժամա-նակացոյցը պահելու հա-մար», կ'ըսէ տեղեկագիրքը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՃԱՆԵՐ

Անիկա նաեւ կը նկա-



16 օրուան առաքելութենէ մը ետք, Քոլիմ-պիա երկրագունդին մթնոլորտին մէջ մուտքի ըն-թացքին, 1 Փետրուարին տարանջատուած էր թերսափ վերէ՝ անձնակազմի 7 անդամները սպաննելով եւ ամերիկեան քամի մը մահացնելով:

րին առնչուող մասնէն աս թերութիւնները կարելի էր քաղաքական տուեալը՝ Մ. Նահանգներ-ի խորհրդային Միութիւն-անջրպետային մրցակցու-թիւնը անհետացած էր, եւ քաղաքական նոյնքան ու-ժեղ թիրախ չկար զայն փոխարինելու համար»:

Մարդկային անջրպե-տագնացութեան ծիրին մէջ խորհրդային Միու-թեան իրրեւ մրցակցը կո-րուստը ՆԱՍԱ-ի համար գոն արագացուցած էր 1990ական թրուականնե-րուն պիւտեճական անի-պահանջները:

Սակայն, փոխանակ իր ակնկալութիւնները նոր իրականութիւններուն յարմարեցնելու, ՆԱՍԱ շարունակած է արագ թա-փով իր օրակարգը գոր-ծողութեան ղեկի ի մի-ջի այլուց անջրպետային միջազգային կեդրոնին մշակումով եւ կառուցու-

րագրէ քաղաքական աւե-լի յայնածիր բեմը, որ նպատակած է Քոլիմպիայ-ի արկածին տեղի ունե-նայուն խօսելով Պաղ պա-

ԵՕԹԸ ԱՍՏԵՂԱԿԵՐՊԵՐ՝ ՔՈԼԻԻՄՊԻԱՅԻ ԱՍՏԵՂԱԿԵՐՊԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ ԿԸ ԿՈՉՈՒԻՆ

ՆԱՍԱ Օգոստոսին յայտարարեց, թէ եօթը աստեղակերպեր կոչ-ւած են Քոլիմպիայի անձնակազմը բաղկացնող եօթը աստղանաւոր-ներուն անուններով:

«Կուգեմ մտաձել, որ յառաջիկայ տարիներուն, տասնամեակնե-րուն եւ հազարամեակներուն մարդիկ դեպի երկինք պիտի նային, պիտի գտնեն այդ եօթը աստեղակերպերը եւ պիտի յիշեն անոնց գո-հաբերութիւնը», յայտնած է ՆԱՍԱ-ի ճէթ Փոփպալըն Լեպլընթըրի աստեղակերպերու հետապնդումի ծրագրին պատասխանատու Ռեյ-մընտ Պեմպըրի:

Աստեղակերպերը գտնուած են Սան Տիեկոյի մտակայ Փալոմար աստղադիտարանին ձամբով, Յուլիս 19էն 21 2001ին, ՆԱՍԱ-ի աստ-ղագետներէն Էլիզնոր Բելիմի կողմէ:

Աստեղակերպերը արեւուն շուրջ կը թաւալին արեգակնային դրու-թեան մնացեալ մոլորակներուն ճամն, սակայն անոնք փոքր են եւ անկանոն ձեւեր ունին: Անոնց մեծամասնութիւնը կը գտնուի Կրատի եւ Լուսնաբազի միջեւ գոտիին մէջ:


մով, կ'ըսէ Սի. էյ. Այ. Պի.: Ի տես պիւտեճական յաւելումի չզոյգութեան՝ ՆԱՍԱ-ի միակ միջոցը եղած է աւելին ընել նուազ դէպի անջրպետ երթուղարձ անջրպետանակներու ծրա-գիրը մեծ փնաս կրած է:

ԵՐԿՐԹ ՏԵԻՈՂՈՒԹԵԱՆ ՎԻԱՅ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Քննիչներու խմբակը եզրակացուցած է, որ թէ՛ եւ ներկայիս դէպի անջր-պետ մեկնող եւ վերադար-ձող անջրպետանակները ամբողջովին անապահով փոփոխութիւններ պէտք է կատարուին կարճ տեւո-ղութեան վրայ՝ անոնց ապահովութիւնը երաշ-խատելու համար: Մարմինը իսկապէս հա-մոգուած է, որ եթէ տա-կաւին գոյութիւն ունեցող

Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱՃԵԱՆ (Աղբիւրներ՝ «Պի. Պի. Սի.», «ՈՈՅՈՐԸ», ԱՖՓ)

Advertisement for G. AYANIAN & SONS featuring various lighting fixtures and contact information: Dora, (01)255222/3/4/5/6, Gemmayzé, (01)447000-445396, (03)627728/9, Fax: (01)265187-582357, E-Mail: gasons@dm.net.lb, www.ayanian.com



Հաւանական է, որ ոչ շատ հեռու ապագային ՆԱՍԱ պիտի օգտագործէ Օրպիթըլ Սփէյս Փլէյ-նը, թէ անհրաժեշտ միջակայք ստանայ զայն մշակելու եւ կառուցելու համար: Անիկա անձնա-կազմը պիտի փոխարէ Անջրպետային միջազ-գային կեդրոնը:

հանրային հասարակական միջոցաւարտ, որ անցեալին ֆոմի հար-

BALTAYAN ELECTRONIC



Մ. Բալայանի
«Գործ Էլեկտրոն»
Անձնակազմ
Հեռ. : 01 / 262901
Ք. Բալայանի
Տրաք. հեռ. : 01 / 255604



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամահոյներու փակման սակագիները հետեւեալներն էին երկը.
Սուրիական թղթուկի 28,55 - 28,75 լ.ն.
Քուէյթեան տիւար 5118,00 - 5143,00 լ.ն.
Յորդանանեան տիւար 2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնեան տիւար 3985,00 - 4010,00 լ.ն.
Ա. Մ. Էմիրութեանց տիրիամ 410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան ուիլ 413,75 - 415,75 լ.ն.
Սէուտական ուիլ 402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան ուիլ 3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կիւնէ 220,00 - 230,00 լ.ն.
Անգլիական սթերլին 2525,00 - 2535,00 լ.ն.
Զուիցերիական ֆրանք 1129,00 - 1134,00 լ.ն.
Թրքական լիրա 104,75 - 105,25 լ.ն.
Կիպրական փաունտ 2975,00 - 3000,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն 13,55 - 13,65 լ.ն.
Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար 1140,00 - 1145,00 լ.ն.
Աւստրալիական տոլար 1040,00 - 1045,00 լ.ն.
Եւրօ 1755,00 - 1765,00 լ.ն.

● ՈՍԿԻ
Անգլիական մէկ ոսկի 144,000 - 149,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի 129,000 - 134,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի 119,000 - 124,000 լ.ն.
Մեքսիքական փէսոս 687,000 - 707,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյ ոսկի 17,925,000 - 18,125,000 լ.ն.
Մէկ օսն ոսկի 371,25 - 371,75 \$
Մէկ օսն արծաթ 4,92 - 4,94 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
Եւրօ 1.1636 - 1.1640
Քանադական տոլար 1.3184 - 1.3189
Զուիցերիական ֆրանք 1.3335 - 1.3340
Ճափոնական եէն 110.16 - 110,21
Մէկ սթերլին 1.6760 - 1.6764

Մէկ փոխար 585 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՇՆԵԹՈՒՂԹԵՐ
Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում
Ա. կարգ 4,20 4,23
Բ. կարգ - - -

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

DAY WATER

Մասնավաճառի դրուին ստանդարտներու գնումի պարագային: 10,000 լ.ն. Հասարակութեան համար յարուցող ռիսկերը:

Ապրիլի 2 րիմի Գաւի
AFIREM EST.
Near Lebanese Electric Company
Tel.: 01 - 466 325 / 570 007

Clean & Safe Water
Under Hygienic Condition
NATURAL - PURELIGHT - LOW IN SODIUM

Free Delivery
19 Lit. @ 2000L.

Approved By Rain Water

Mr. Jim Manouk Keushkerian owner
DAY WATER, Tel.: 03/435298

www.hamazkayin.com

ԽԱՉԲԱՌ ԹԻՒՒ 5571
Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

- | ՎՈՐԻՉՈՒՄԱԿԱՆ | ՈՒՂՂԱՆԱՅԵԱՏ |
|---|---|
| 1. Վտտահելի, ուղղամիտ: | 1. Ամրակազմ: |
| 2. Ճամբայ - Կայթ - Ցաւելում: | 2. Հետո, ըմբոստ - Կլայել: |
| 3. Նոյն գիրերը - Իմաստազուրկ: | 3. Տեղափոխուած տառեր - Ժամանակի միաւոր - Հաստատական պատասխան: |
| 4. Աղանի տեսակ - Աղանի ծննդավայրը: | 4. Վայրի թռչուն - Վրաստանի գետերէն: |
| 5. Ճոկան - Մանրաբար: | 5. Հին, վաղմի - Յուցական անական: |
| 6. Նարազան - Կէս գլխացաւ: | 6. Կիտուած - Սիաման-թոյն ծննդավայրը: |
| 7. Արական օտար անուն - Իրաքեան լրատու գործակալութիւն: | 7. Բազմութիւն - Պահեցողութիւն - Հայ գուտան: |
| 8. Յուցական անական - Պատշաճ - Մանիին յաջորդ օրը: | 8. Բուն, հարազատ - Կողոպուտ: |
| 9. Նաղ - Ջրային փոխադրամիջոց - Ռամկօրէն՝ այլ: | 9. Լիզպոնի նահատակներէն: |
| 10. Կիլիկեան նաւահանգիստ - Հայաստանի քաղաքներէն: | 10. Հուր - Հայ դիցուհի: |
| 11. Ըմբիչ: | 11. Արտայայտուածի կերպ - Տարիանուն: |

ԹԻՒ 5570
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԹՈՒՄԸ

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՈՒՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐՉԱԿԱՆ ԵՒ ՁԵՏԵՂՄԱՆ ԱՐՈՒԵՍԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄՆԵՐ

Մշակութային եղանակի «վերանուտին» հետ վերաշխուծացաւ նաեւ ցուցահանդէսներու շարքը: Ներկայիս տեղի կ'ունենան մեծ թիւով լուսանկարչական, նկարչական թէ Վեռնի-ման արուեստի ցուցահանդէսներ, որոնք լիբանանեան հանրութեան կը ներկայացնեն լիբանանցի թէ օտար արուեստագէտներու գործերը:

Նշենք, որ գեղանկարիչը անհատական թէ հասարակական մասի ցուցահանդէսներով իր գործերը ներկայացուցած է արուեստագէտներու շարքին մէջ: Այս ցուցահանդէսներուն ծիրին մէջ 21 - 23 Հոկտեմբերին տեղի կ'ունենայ յորդանանցի գեղանկարիչ իսալէտ Համպայի ցուցահանդէսը: Քասալի Սուրբ Հոգի համալսարանին գեղարուեստի բաժնումն է կողմէ:

Այս ցուցահանդէսներուն ծիրին մէջ 21 - 23 Հոկտեմբերին տեղի կ'ունենայ յորդանանցի գեղանկարիչ իսալէտ Համպայի ցուցահանդէսը: Քասալի Սուրբ Հոգի համալսարանին գեղարուեստի բաժնումն է կողմէ:

ԱՅՍՈՐ

- Նուագահանդէս՝ սեղեկային երաժշտութիւն, ժամը 20:00ին, «Աէն ժոզէֆ» համալսարանի «Փիեռ Ապու Խաթըր» սրահ:

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Փուէն տը Վի», Նապիլ Ղանտուրի գործերը, «Ռոշան» ցուցասրահ, մինչեւ 4 Նոյեմբեր:

- Պարային ելոյթ՝ «Վուլյաժ տ'էօն քոր», ժամը 20:30ին, «Էլ Մատինա» բառերասրահ, մինչեւ 24 Հոկտեմբեր:

- Թատրոն՝ «Պ'Ինքիզար Կոտո», ժամը 20:30ին, Պէյրուս բառերասրահ, մինչեւ 24 Հոկտեմբեր:

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Փալեսթինեան 1948», Ֆրանսական Մշակութային Կեդրոն, մինչեւ 31 Հոկտեմբեր:

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ Ալեքսանտր Մաքսիմովիչ Զիլովի գործերը, Ռուսական Մշակութային Կեդրոն, մինչեւ 27 Հոկտեմբեր:

ՕԴԵՐԵՒՈՅԹ

ԵՐԵՎԱՆԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003
ՊԵՅՐՈՒԹ
ՄԱՍԱՄԲ ԱՄՊՈՏ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՑԵՐԵԿ՝ 30°C
ԳԻՇԵՐ՝ 22°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 55%

ԱՉԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ

21 Հոկտեմբեր 1953

ՅՈՅՆԵՐՈՒՆ ՇՆՈՐ ՀԱԿԱԼԻԲԸ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՕՄԻՆ

Ինչպէս գիտեք, Յունաստանի վերջին երկաշարժին առիթով, Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդրոնին Կոմիտեին եւ Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական վարչութիւնը 500ական տոլարի գումարներ դրկած էին յունական Նպաստամատոյցի Նիւ Եորքի կեդրոնին:

Վերոյիշեալ մարմինը («Յոնիական կողմերու նպաստի հիմնադրամ») Կեդրոնական Կոմիտեին դրկած է հետեւեալ գումարը, 16 Ամերիկեան Բոստոնի մէջ Հիւսիսային ու Հարաւային Ամերիկաներու բեմի առաջնորդին ստորագրութեամբ:

- «Երախտապարտ եմք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ինչպէս նաեւ անոր օժանդակ Հայ Օգնութեան Միութեան այն առատաձեռն նպաստի համար, զոր անոնք դրկած էին Յոնիական կողմերու վերջին երկաշարժին աղետակներուն համար նշանակալի նպաստամատոյցին:

Շատ զգացունած եմք այն ազնիւ ու եղբայրական զգացումներէն,

որոնք կը յայտնուին մեր 9 Սեպտեմբերի նամակին մէջ:

Ձեր բառերուն, մեր մտածումներուն եւ մեր հոգածութեան մէջ յոյն ժողովուրդը պիտի գտնէ յոյս, միութեամբ ու կորով, այն գիտակցութեամբ, թէ մեր Երկրի օրերուն մեր հայ եղբայրներուն սիրտը բաց է մեզի համար: Ու նաեւ այն գիտակցութեամբ, թէ զժրատութեան ատեն մեր հաւատարիմ բարեկամները՝ հայերը, իրենց կարելի կ'ընեն մեր ցաւերը մեղմացնելու համար:

Կը վստահեցնենք մեզի, թէ յոյն ժողովուրդը յաւեւ պիտի յիշէ այս ինքնաբերական օժանդակութիւնը եւ այն ջանքերը, զորս մեր կազմակերպութիւնը եւ հայ ժողովուրդը ի գործ կը դնեն օգնութիւն փութացնելու համար:



Ամենակալը Աստուած օրհնէ մեզ եւ առողջութիւն պարգեւէ մեզի, որպէսզի շարունակեք մեր քրիստոնէական շունչը:

ԱՅՍՈՐ 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

- 1921.- Թուրքիայի Կարսի զաշնագրի ստորագրութիւն:
- 1935.- Մահ Կոմիտաս Վարդապետի:
- 1992.- Ճահուճեանի ֆետայական խումբերը կ'ոչնչացնեն Սարսանգէն Լաքերը ուղղուող ագերիական զինուորական փոխադրակառքերու կարաւան մը:

Մնամ աղօթարար՝ ՄԻՆԱՅԷԼ ԱՐՔԵՂԻՍԿՈՊՈՍ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Ն



ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ



Երիտասարդության և մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երեկ նախարարության իր կեդրոնատեղիին մէջ ընդունեց Լիբանանի մարմնամարզի ֆեդերասիոնի նախագահ Մոհամետ Մաքքին և ֆեդերասիոնի անդամներ:

Նախարար Յովնանեան նախարարության իր կեդրոնատեղիին հեռաձայնային կապ հաստատելով Մարպական Աւանի տնօրէն խորհուրդի նախագահ Ռիատ Շէյխայի հետ, պահանջեց ամէնէն կարճ ժամանակամիջոցին պետք է յատուկ տեղ մը տրամադրուի մարմնամարզին, որպէսզի կարելի ըլլայ այդ մարզին մէջ եւս լայնարկիւնքներ արձանագրել՝ միջազգային մրցաշարքերուն ընթացքին:

«ՉԵՄՓԻՆԸ ԼԻԿ»-Ի ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ԱՅՍՕՐ

«Չէմփիընզ Լիկ»-ի ֆուտբոլի մրցաշարքի հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենան ութ ճակատումներ՝ Ա., Բ., Գ. և Դ. խմբակներէն: Վաղուան յայտագիրին վրայ եւս կան ութ մրցումներ՝ Ե., Զ., Է. և Ը. խմբակներէն ներս:

Այսօր տեղի ունենալիք մրցումներուն կարեւորագոյն հանդիպումները կը կարծուին ըլլալ՝ Լիոն - Պայէրն Միւնխի և Տեփոթթիօ Քորունա - Մոնաքո ճակատումները:

Լիոնի պրապիլցի յառաջապահ՝ Ճիովանի Էլպէր, որ պիտի ճակատի իր նախկին կազմին՝ Պայէրն Միւնխի դէմ, յոյսով է, որ իր կազմը իր դաշտին վրայ յաղթանակ մը պիտի արձանագրէ:

31 տարեկան յառաջապահը մրցումին նախօրեակին ինքնավստահ է, որ պիտի յաջողի կող մը նշանակել գերմանական կազմին բերդէն ներս: Սակայն այդ մէկը չկատարելու պարագային, Էլպէր պիտի կորսնցընէ տասը հապար եւրոյի գումար մը, որովհետեւ զրաւի եկած է Պայէրն Միւնխի նախագահ՝ Յրանց Պեքըն-պաուլըրի հետ:

Ան կ'ըսէ, որ Պեքըն-պաուլըրէն իր ստանալիք գումարը պիտի տրամադրէ ֆոնտի մը, որ փողոցները գտնուող պատիկներուն համար պիտի օգտագործուի:

Եզրափակելով, ան կ'ըսէ, որ Պեքըն-պաուլըր առանց տատանելու այդ գումարը պետք է հետը բերէ: Մոնաքո, որ ցարդ իր կատարած երկու

մրցումներուն յաղթանակ արձանագրած է, ապահովելով առաւելագոյն վեց կէտերը, քիչ մը դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Տեփոթթիօ

Քորունայի դաշտը: Արսենալ, որ հիւրը պիտի ըլլայ Տինամօ Քիեւի, արդեօք պիտի յաջողի՞ արձանագրել եղանակի իր առաջին յաղթանակը:



Էլպէր

Ստորեւ՝ այսօր եւ վաղը տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան ժամը 21:45ին՝ Պէյրոթի ժամով, բացի Լոքոմոթի Մոսկուա - Ինթեր Միլան մրցումէն, որ տեղի պիտի ունենայ ժամը 19:30ին):

- ԱՅՍՕՐ
- Ա. ԽՄՔԱԿ
Անտըրլէխթ (Պելճիքա) - Սելթիք (Սկովտիա)
Լիոն (Յրանսա) - Պայէրն Միւնխի (Գերմանիա)
- Բ. ԽՄՔԱԿ
Լոքոմոթի Մոսկուա (Ռուսիա) - Ինթեր Միլան (Իտալիա)
Տինամօ Քիեւ (Ուքրանիա) - Արսենալ (Անգ.)
- Գ. ԽՄՔԱԿ
Տեփոթթիօ Քորունա (Սպ.) - Մոնաքո (Ֆր.)
ԱԷ-Ք Աթէնք (Յուն.) - Փ. Ա. Վ. Այնտհովըն (Հոլ.)
- Դ. ԽՄՔԱԿ
Կայաթասարայ (Թրք.) - Օլիմպիաքոս (Յուն.)
Եուվենթոն (Իտ.) - Ռէալ Մոսկուա (Սպ.)
- ՎԱՂԸ
- Ե. ԽՄՔԱԿ
Շրոտթարթ (Գեր.) - Փանաթինայքոս (Յուն.)
Ռէյնճըրզ (Սկով.) - Մանչեսթըր Եունայթըտ (Անգ.)
- Զ. ԽՄՔԱԿ
Մարսէյ (Յրանսա) - Փորթօ (Փորթուգալ)
Ռէալ Մատրիտ (Սպանիա) - Փարթիզան Պելլորատ (Սերպիա)
- Է. ԽՄՔԱԿ
Չելսի (Անգլիա) - Լացիօ Ռոմա (Իտալիա)
Սփարթա Փրակա (Չեխիա) - Պեշքթըշ (Թրք.)
- Ը. ԽՄՔԱԿ
Այաքս Ամսթերտամ (Հոլ.) - Սելթա Վիլո (Սպ.)
Ա. Սէ. Միլան (Իտալիա) - Յ. Բ. Պրիմ (Պելճ.)

ԱՅՑԵԼՈՒԹԻՆ՝ ԱՅՆՃԱՐԻ ԲԱՂԱԲԱՊԵՏԻՆ



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմը այցելութիւն մը տուաւ Այնճար եւ տեսակցութիւն ունեցաւ քաղաքապետ ընկ. Սեպուհ Սգայեանի հետ:

Հ.Մ.Ը.Մ.ական պատասխանատուները քաղաքապետին պարզեցին իրենց ծրագիրները, որոնց գծով ընկ. քաղաքապետը ամբողջական գործակցութիւն եւ աջակցութիւն խոստացաւ:

Շրջանային Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի 85ամեակին առիթով պատրաստած յուշանուէր մը յանձնեց քաղաքապետին, առ ի գնահատանք Հ.Մ.Ը.Մ.ի ընդմէջէն անոր ծառայութիւններուն:

ՃԱՏԲԱԿ. ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՅՑԵԱՆՈՒԹԻՆ

ՍՈՒՐ ՊԱՅՔԱՐ՝ ՌՈՒՍԻՈՅ, ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԵՒ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՂԶԿԱՆՑ ՄԻՋԵԻ

Փլովտիի մէջ (Պուլկարիա) տեղի ունեցող ճատրակի Եւրոպայի աղջկանց խմբային ախոյեանութեան մրցաշարքին 8րդ հանգրուանի մրցումներէն ետք, Հայաստանի ազգային խումբը Ռուսիոյ, Հունգարիոյ եւ Լեհաստանի կողքին միասնաբար կը գրաւէ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը: Անոնք չորսն ալ ունին 12ական կէտ:

Իրենց կատարած 7րդ հանգրուանի մրցումին, Հայաստանի աղջիկները 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեցին մրցաշարքին չորսուր նկատուող կազմերէն Ուքրանիոյ դէմ:

Իսկ 8րդ հանգրուանի մրցումներուն, Հայաստանի աղջիկները 2-0 արդիւնքով պարտութեան մատնեցին Անգլիոյ հաւաքակալը:

9րդ հանգրուանի մրցումներուն, Հայաստան պիտի ունենայ չորսուր մրցակից մը՝ Լեհաստանը:

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅՑԵԱՆՈՒԹԻՆ

ՎԱԼԵՆՍԻԱ՝ ՅԱՐԴ ՄԻԱԿ ԱՆՊԱՐՏԵԼԻՆ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 7րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Վալենսիա շարունակեց մնալ ցարդ անպարտելի միակ խումբը, մինչ վերջին դիրքը գրաւող Էսփանիոլ ցարդ յաղթանակ չարձանագրած միակ խումբը:

Պարսելոնա, որ իր դաշտին՝ «Նու Բամփ»-ի մէջ պարտուեցաւ Տեփոթթիօ Քորունային, կրելով եղանակի իր երկրորդ պարտութիւնը, նահանջեց 11րդ դիրք, տասը կէտով ետ մնալով Վալենսիային:

Ստորեւ՝ 7րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Աթլետիքո Պիլաօ - Վարէալ	2-0
Ռասիոնկ Սանթաբարթե - Մալախա	4-2
Վալենսիա - Էսփանիոլ	4-0
Ռէալ Մարալիոնա - Ռէալ Վալադոլիտ	1-0
Աթլետիքո Մատրիտ - Մայորքա	2-1
Օսասունա - Մուրսիա	2-1
Սելտիլա - Ռէալ Պեթիս	2-2
Սելթա Վիլո - Ռէալ Մատրիտ	0-2
Ալպասէթ - Ռէալ Մուրսիա	3-1
Պարսելոնա - Տեփոթթիօ Քորունա	0-2
ԳՎՍԱՒՈՐՈՒՄ	
1.- Վալենսիա	19 (13-1)
2.- Տեփոթթիօ Քորունա	18 (17-5)
3.- Ռէալ Մատրիտ	16 (17-8)
4.- Օսասունա	14 (10-6)
5.- Ռասիոնկ Սանթաբարթե	11 (11-7)
.....	
11.- Պարսելոնա	9 (5-6)
.....	
18.- Մուրսիա	6 (6-10)
19.- Մայորքա	5 (6-12)
20.- Էսփանիոլ	2 (7-16)

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ ԿԱԽԱԿԱՅԵՑ ՖԵՐԿԸՍԸՆԸ

Անգլիոյ ֆուտբոլի ֆեդերասիոնը երեկ երկու մրցումով կախակայեց եւ 17 հապար ամերիկեան ժողովրդական շախմատի ֆեդերացիոն Մանչեսթըր Եունայթըտի մարզիչ՝ Ալէքս Ֆերկըսընը, անցեալ Օգոստոսին Նիւքասլի դէմ տեղի ունեցած մրցումին անկարգապահ գտնուելուն համար:

Հակառակ անոր որ այդ մրցումին անոր կազմը 2-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, սակայն ան դժգոհ մնալով իրաւարարին մէկ սուլիչէն, չորրորդ իրաւարարին դէմ գտնուեցաւ անկարգապահ եւ այդ իսկ պատճառով կարմիր քարտ մը ստացաւ: Այժմ ան իր կազմին կատարելիք երկու մրցումներուն ընթացքին իր մարզիկներուն ցուցմունքներ պիտի կատարէ... Թրիպլիւնէն:



Ֆերկըսըն

ԳԵՏԵԼԱՐՇԱՒ

ՊեթթիՆԻ՝ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Իտալացի հեծելանորդ Փաուլօ ՊեթթիՆԻ 2003 տարին աւարտեց գրաւելով աշխարհի հեծելանորդներուն ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, իրմբ բաւական ետեւ ձգելով ամերիկացի հեծելանորդ Լէնս Արմսթրոնկը (8րդ), հակառակ անոր որ այս վերջինը յաջորդաբար հինգեւորդ տարին ըլլալով շահեցաւ Յրանսայի հեծելարշաւի շրջավազը («Թուր Տը Ֆրանս»):

Անցեալ տարի աշխարհի թիւ 1-ը դասուած գերմանացի Էրիք Յապլը տարին աւարտեց երկրորդ դիրքին վրայ:

Ստորեւ՝ հեծելարշաւի միջազգային ֆետերասիոնին կողմէ հրապարակուած դասաւորումը.

ԿԷՏ	
1.- Փաուլօ ՊեթթիՆԻ (Իտալիա)	2266
2.- Էրիք Յապլը (Գերմանիա)	2087
3.- Ալեքսանտրօ Փեթրաքի (Իտալիա)	1989
4.- Ճիլպերթօ Սիմոնի (Իտալիա)	1715
5.- Տալիտ Ռեպիլի (Իտալիա)	1656
6.- Ալ. Վինտրուրով (Ղազախստան)	1640
7.- Ալեքսանտրօ Վալվերտէ (Սպանիա)	1611
8.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.)	1521
9.- Միքայէլ Պուկերտ (Հոլանտա)	1441
10.- Իպան Մայօ (Սպանիա)	1425
.....	
13.- Յրանչեքօ Քապակիստէ (Իտ.)	1322
14.- Տարիօ Ֆրիլօ (Իտալիա)	1265
15.- Եան Ուլրիշ (Գերմանիա)	1258
.....	
20.- Տէյվիտ Միլար (Բրիտանիա)	1092
21.- Պէյրոն Բուք (Աւստրալիա)	1085
.....	
24.- Ռուպերթօ Հերաս (Սպանիա)	963
25.- Լորան Պրոշար (Յրանսա)	961

ԲԱԼՉԻՕ

ԵՆՈՒՎԷ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 6րդ հանգրուանի մրցումներուն, ընդհանուր դասաւորման առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը՝ Եուվենթոն, Ա. Սէ. Միլան եւ Ա. Էս. Ռոմա յաղթա-

նակներ արձանագրելով, մնացին ցարդ անպարտելի միակ խումբերը: Փարմա կրեց եղանակի իր առաջին պարտութիւնը, մինչ Սիենա արձանագրեց իր

առաջին յաղթանակը: Վերջին երկու դիրքերը գրաւող խումբերը՝ Էմփոլի եւ Անքոնա միակ խումբերն են, որ ցարդ յաղթանակ չեն կրցած արձանագրել:

Ստորեւ՝ 6րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Ա. Սէ. Միլան - Լացիօ Ռոմա	1-0
Պոլոնիա - Փերուճիա	2-2
Զիեւ - Սամտորիա	1-1
Մոտենա - Լեչէ	2-0
Ռեճիճա - Սիենա	2-1
Ա. Էս. Ռոմա - Փարմա	2-0
Ուտինգեզ - Էմփոլի	2-0
Աճընճա - Եուվենթոն	2-3
Պրեշիա - Ինթեր Միլան	2-2
ԳՎՍԱՒՈՐՈՒՄ	
ԿԷՏ	
1.- Եուվենթոն	16 (16-7)
2.- Ա. Սէ. Միլան	16 (12-3)
3.- Ա. Էս. Ռոմա	14 (14-3)
4.- Փարմա	11 (10-7)
5.- Մոտենա	10 (8-4)
.....	
16.- Լեչէ	3 (6-16)
17.- Էմփոլի	2 (4-17)
18.- Աճընճա	1 (4-15)

ԹԵՆԻՍ. ՍԱՐԳՍԵԱՆ ԱՆՑԱԻ Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Ս. Փեթերսպուրկի մէջ (Ռուսիա) տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքի Ա. հանգրուանին իր կատարած մրցումին, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան յաղթանակ մը արձանագրեց եւ ապահովեց Բ. հանգրուանին իր տոմարը: Սարգսեան 6-3 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց Ռատէք Սթեփանէրը (Չեխիա):

ԵԱՀԿ ԵՆԵԱԳԱՀԸ ԱՅՍՕՐ ԿԸ ՀԱՄՆԻ ԵՐԵՒԱՆ

Աշխատանքային կարճ այցելության մը համար այսօր Երեւան կը հասնի ԵԱՀԿ գործող նախագահ, Հոլանտայի արտաքին գործոց նախարար Եասֆ Տէ Հուփ Շեֆըր:

Ան Երեւանի մէջ հանդիպում պիտի ունենայ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի, Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ ոչ-կառավարական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու հետ:

ՉՈՒԻՑԵՐԻՈՅ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՑՆՑՈՒԱԾ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ԺԸՆԵՒ, 20 (ԱՅՓ).- Աջակողմեան Չուիցերիացի ժողովուրդի կուսակցութիւնը Երկուշաբթի օր ցնցած է Չուիցերիոյ քաղաքական ասանդակն ապակեղէնէն, Կիրակի օր կայացած խորհրդարանական ընտրութիւններուն առաջին դիրքը գրաւելէ ետք:

Այօրինի գաղթականներուն եւ ոճիրներու դէմ արշաւ տանելէ ետք, նշեալ կուսակցութիւնը յաւելեալ 11 արձու եւ քուէներուն 27,7 առ հարիւրը ապահոված է՝ խորհրդարանին 200 արձուներուն 55ին տիրանալով, ըստ առժամեայ արդիւնքներու:

Ընկերվարական կուսակցութիւնը՝ իբրեւ երկրորդ մեծագոյն կուսակցութիւն, 52 արձու ձեռք ձգած է, այսինքն՝ մէկ արձու աւելի բաղդատած 1999ի ընտրութեանց:

Սակայն Կեդրոնի Աջ Արմատականները եւ Քրիստոնէայ ժողովրդավարները ակնկալուածէն աւելի մեծ կորուստներ արձանագրած են: Անոնցմէ իւրաքանչիւրը եօթը արձու կորսնցուցած է, ստանալով 36 եւ 28 արձու:

4 կուսակցութիւնները իշխանութիւնը պիտի բաժնեկցին Չուիցերիոյ կառավարութեան՝ Դաշնակցային խորհուրդին մէջ: Չուիցերիացի ժողովուրդին կուսակցութիւնը յայտարարած է, որ քաղաքական իր գլխաւոր անձնաւորութիւնը՝ Քրիստոֆ Պլոշէ, նախարարական յաւելեալ պաշտօն մը պիտի պահանջէ, երբ նոր խորհրդարանը Դեկտեմբեր 10ին կառավարութիւնը ընտրէ:

«Պատմական արդիւնք մը ձեռք ձգեցինք եւ կ'ուզենք վայել տուեալներու վերածել», ըսած է կուսակցութեան նախագահը՝ Ուէլի Մօրէր:

ԻԶԵԹՊԵԿՈՎԻԶԻ ՄԱՍԻՆ ՅԵՏ ՄԱՀՈՒ ԳՈՎԱՍԱՆԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ...

ՕԹԱՆ, Երոստական Միութիւնն ու այլ երկիրներու ղեկավարներ երէկ գովասանքի խօսքեր ուղղեցին Պոսնիոյ նախկին նախագահ Ալիա Իվեթօպօկովիչի, որ մահացած էր Կիրակի օր: Անոնք ողջունեցին պոսնիացի ղեկավարին ունեցած քաղաքական դերակատարութիւնն ու քաջութիւնը Պոսնիոյ նորագոյն պատմութեան մէջ:

Յրանսայի նախագահ ժաք Շիրաք ըսաւ, որ Իվեթօպօկովիչը պատմական դերակատարութիւն ունեցած է ստորագրելով Տէյթթըն - Փարիզ խաղաղութեան համաձայնագիրը, որ վերջ տուաւ պատերազմին (1995):

ՕԹԱՆի ընդհանուր քարտուղար ճորձ Ռոպրթաւըն յարգանքի տուրք մատուցեց, «Իվեթօպօկովիչը մը յայտարարելով պոսնիացի ղեկավարը, որ իր երկիրը դրաւ Երոստայի եւ ՕԹԱՆի շարքերուն անցնելու ճամբուն վրայ»:


Ե. Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու խաւիէ Մոյանա եւս ողջունեց Իվեթօպօկովիչը, որ դժուար պայմաններու տակ պատմական դերակատարութիւն ունեցած է:

78ամեայ Իվեթօպօկովիչը մահացած էր Կիրակի օր սրտի կաթուածի մը պատճառով, Սարաեւոյի մէջ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱՐՉՐԱՍՏԻՃԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆԻ ՄԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՓՈԹՈՐԻԿ ԿԸ ԱՍԵՂԾԵՆ

ԷՉ6

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՔՈՐԷԱ ՆՈՐ ՀՐԹԻՌ ՄԸ ՓՈՐՁԱՐԿԱԾ Է



ԱՓԷՔԻ ՎԵՆԱԾՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻԳՆԵՐՈՆԸ ՍԱՅՏՈՆԱԿԱՆ ԽԱՐԱԿԱՐԸ

Հիւսիսային Քորէա երէկ ցամաք - նաւ հրթիռ մը փորձարկած է՝ իր տարեկան ռազմափորձերու ծիրէն ներս, յայտնած է Հարաւային Քորէայի բանակին սպայակոյտի պետը, առանց ճշգրտօրէն ըսելու, թէ ո՞ր եւ ե՞րբ տեղի ունեցած է անիկա:

Սպայակոյտին մէկ բանբերին համաձայն, փորձարկումը մեծ կարեւորութիւն չի ներկայացներ: Ան ըսած է, որ այս տարի նման երեք փորձարկումներ տեղի ունեցած են:

Հիւսիսային Քորէայի կողմէ հրթիռներու եւ յատկապէս հեռու հասնողութեամբ հրթիռներու մշակումը տարիներէ ի վեր մտահոգութիւն կը պատճառէ Ճափոնի եւ Մ. Նահանգներու:

ԱՓԷՔԻ ՎԵՆԱԾՈՂՈՎԻՆ՝ ՓՈՒՆԿԵԱՆԿԸ ԱՈՒՋԻՆ ԿԱՐԳԻ ՆԻԻԹ...

Պանքրքի մէջ երէկ բացուած ԱՓԷՔԻ վեհաժողովին առընթեր տեղի ունեցած երկկողմանի բանակցութեանց օրակարգի գլխաւոր նիւթը Հիւսիսային Քորէայի կորիզային մարզի «փառասիրութեանց» հարցը եղած է:

Հրթիռին փորձարկումէն առաջ, Մ. Նահանգներու եւ Հարաւային Քորէայի նախագահներ ճորձ Պուշ Եւ Ռոնի Մու - Հիւսիսային Քորէայի նախագահ յայտարարութեամբ մը կոչ ուղղած են Հիւսիսային Քորէայի՝ ինքնապաշտպան ըլլալու եւ չդիմելու որեւէ քայլի, որ կրնայ աւելի տագնապալի դարձնել կազմութիւնը:

(ԱՅՓ)

ԹՈՔԻՑ ԵՒ ՄՈՍԿՈՒԱ ԿԸ ՋԱՆԱՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԵԼ

ՄՈՍԿՈՒԱ, 20 (ԱՅՓ).- Ճափոն եւ Ռուսիա «իմաստուններու խորհուրդ մը» պիտի կազմեն՝ վերջ տալու համար երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութեանց, յատկապէս այն խոչընդոտներուն, որոնք ցարդ արգելաւած են յետ Բ. Աշխարհամարտ խաղաղութեան համաձայնագրի մը կնքումը, ըսած է ռուս բարձրաստիճան պաշտօնատար մը Երկուշաբթի օր:

Անիկա պիտի ընդգրկէ հանրային բարձրաստիճան անձնաւորութիւններ, որպէսզի անոնք նոր գաղափարներ ու մօտեցումներ մշակեն՝ ռուսեւեմփոնական աւելի սերտ յարաբերութեանց համար:

Պանքրքի մէջ Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին եւ Ճափոնի վարչապետ Եոսիիչիւրօ Քոյաբուի ունեցած են տեսակցութիւն մը, որուն ընթացքին անոնք արծարծած են խորհուրդին կազմին հարցը:

Բ. Աշխարհամարտի արարտէն մօտաւորապէս 60 տարի ետք, Մոսկուա եւ Թոքիօ չեն կրցած համաձայնութիւն մը գոյացնել՝ Քուրիլեան չորս կղզիներու շուրջ բանավեճի մը պատճառով:

Անոնք գրաւուած են խորհրդային ուժերուն կողմէ Բ. Աշխարհամարտի վերջին օրերուն: Ճափոն վանոնք կը պահանջէ ներկայիս:

ԵԳԻՊՏՈՍ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ՊԱՅԱՆՁՈՂ ՑՈՅՑԵՐԸ Կ'ԱՐԳԻԼՈՒԻՆ

ԳԱՀԻՐԷ, 20 (ԱՅՓ).- Եգիպտոսի իշխանութիւնները արգելեցին ցոյց մը, որ տեղի պիտի ունենար 20րէք-22րէք օր (վաղը), Գահիլէի նախագահական պալատին դիմաց: Ցոյցը կազմակերպող մարմինը յայտնեց, որ իշխանութիւնները փոխանցած են, թէ հաւաքը կ'արգիլուի ապահովական պատճառներով:

Չախակողմեան կուսակցութիւններ եւ ոչ կառավարական այլ կազմակերպութիւններ կազմակերպած էին ցոյցը, որ պիտի պահանջէր քաղաքական արմատական բարեկարգումներ: Կազմակերպողները կը յուսային, որ ցոյցը առիթ պիտի ընծայէր կառավարութեան ներկայացնելու աղերսագիր մը, որ քաղաքական եւ սահմանադրական բարեկարգումները անհրաժեշտ կը նկատէ:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ՍՐԻՆԱԿԱՐ.- Երկու հոգի սպաննուեցաւ եւ 60 հոգի վիրաւորուեցաւ Քաշմիրի մէջ, ուր երկու պայթումներ տեղի ունեցան երէկ:

● ԹԵՀՐԱՆ.- Իրանի դատական իշխանութիւնները փակման վճիռ արձակեցին քրտերէն շաբաթաթերթի մը դէմ: Փակման պատճառները չիրապարակուեցան:

● ԹԵՀՐԱՆ.- Թմրեցուցիչի մաքսանենգութեան համար մահուան դատապարտուած հինգ իրանցիներ կախաղան բարձրացան հարաւային Պամ քաղաքին մէջ:

● ԹԵՀՐԱՆ.- Իրանցի մը, որ դատապարտուած էր հինգ մատներէն չորսը անդամահատելու՝ գողութեան յանցանքի համար, դատարանի մը երրորդ յարկէն վար նետուելով վիրաւորուեցաւ: Ան կ'ուզէր փախուստ տալ վճիռին գործադրութենէն:

(ԱՅՓ)

ԻՐԱՔԻ ՄԵՉ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՁՈՂԵՐՈՒՆ ԹԻԷ ԿԸ ԲԱՐՉՐԱՆԱՅ

ՊԱՂՏԱՏ, 20 (ԱՅՓ).- Ամերիկացի պիւտր մը եւս սպաննուեցաւ Երկուշաբթի օր Իրաքի մէջ, այն պահուն, երբ Ուաշինկթըն կոչ կ'ուղղէր այլ պետութիւններու առաւանձնութեամբ նուիրատուութիւններ կատարելու երկիրին վերաշինութեան համար:

Ամերիկացի պիւտրներուն դէմ նորագոյն յարձակումին կը սպաննուէր պիւտր մը, 104ի բարձրացնելով սպաննուած պիւտրներուն թիւը Իրաքի մէջ՝ Մայիս 15ն ի վեր: Յարձակումը գործուեցաւ Ֆալլուժայի մէջ, ուր պիւտրներ ակնաւոր պայթեցուցին, երբ խումբ մը պիւտրներ կ'անցնէին: Մէկ պիւտր սպաննուեցաւ եւ հինգ ուրիշներ վիրաւորուեցան:

Մինչ այդ, ամերիկացի պաշտօնատարներ թափ կու տան իրենց ճիգերուն մեծագումար յատկացումներ ապահովելու համար Իրաքի վերակառուցման աշխատանքին: Նախագահ ճորձ Պուշ կը յուսայ, որ Մատրիտի մէջ այս շաբաթուան ընթացքին տեղի ունենայիք հանդիպումին, կարելի պիտի ըլլայ համոզել նուիրատու երկիրները:

ԿԱՍԿԱԾԵԼԻ ԱՀԱՔԵԿԻՉՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ՝ ՍԵՌՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ՄԵՉ

Սէնտական Արաքիոյ ներքին գործոց նախարարութիւնը երէկ յայտարարեց, որ երկրին գաղտնի սպասարկութիւնները Կարմիր Օտվուն ափին գտնուող ձեռտա քաղաքին մէջ ձերբակալած են կասկածելի ահաբեկիչներ, որոնց մօտ գտնուած են մեծ քանակութեամբ պէնթեր եւ պինամօթերք:

Ձերբակալեալներուն ինքնութեան մասին ցարդ ոչինչ կը յայտարարուի:

ՊԵՅՏԻՆԿ ԵՒ ՌԵՇԻՆԿԹԸՆ ՈՐՈՇԱԾ ԵՆ ԲՈԼՈՐ ՍԱՐՉԵՐՈՒՆ ՄԵՉ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԱՓ ՏԱԼ

ՊԱՆՔՈՔ, 20 (ԱՅՓ).- Չինաստան եւ Մ. Նահանգներ Երկուշաբթի օր որոշած են գործակցութեան թափ տալ «բոլոր մարզերուն մէջ», ներառեալ՝ հակաահաբեկչութեան մարզին եւ պարկ տալ երկկողմանի առեւտուրին, յայտնած է Չինաստանի արտաքին գործոց նախարար Լի ժաօպինկ:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլի հետ Պանքրքի մէջ տեսակցութենէ մը ետք, Լի թղթակիցներու ըսած է, թէ Չինաստան յաւելեալ նիւթեր պիտի ներածէ Մ. Նահանգներէն, «սակայն կը յուսանք, որ Մ. Նահանգներ յաւելեալ նիւթեր պիտի ներածեն Չինաստանէն»:

Երկու երկիրներուն նախագահները՝ Հու Ճինթաու եւ ճորձ Պուշ տեսակցութիւն մը ունեցած են Կիրակի օր: Ըստ Չինաստանի արտաքին գործոց նախարարութեան մէկ բանբերին, երկու ղեկավարները քննարկած են այն հարցը, թէ ի՞նչպէս երկու երկիրները էլեւմտական յաւելեալ գործակցութիւն կրնան ունենալ:

ՄԵՆՔ ԹՐԲԱԿԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

առաջին այցելութեան նախօրեակին՝ պատմականօրէն լարուած յարաբերութիւնները բարելաւելու նպատակով:

Յունական «Էլէֆթերոփիլիա» օրաթերթին մէջ Շարաթ օր յու տեսած հարցապրոցի մը մէջ, Էօպրոք ըսած է, որ երկու երկիրներուն հարցերը «մէկ շաբաթուան ընթացքին» կրնան լուծուի թուրքիոյ Ե. Միութեան անդամակցութենէն ետք:

Յունաստան սակայն կը պնդէ, որ թուրքիա երկկողմանի իր բոլոր բանավեճերը պէտք է լուծէ նախքան Ե. Միութեան անդամակցութեան բանակցութեանց սկսիլը:

«Քաղաքական ղեկավարներ նկատի չեն ունենար պիւտրական սպայի մը յայտարարութիւնները, ինչ ալ ըլլայ անոր դիրքը», ըսած է Պեկիթիս:

Կիւլ եւ անոր յոյն պաշտօնակիցը՝ ճորձ Փափանտրէնու պիտի քննարկեն նաեւ 2004ի Աթէնքի Ողիմպիականներուն ընթացքին ապահովութեան եւ երկու երկիրներուն միջեւ կառուցուելիք բնական կապի խողովակին կապուած հարցեր: